

սրտակցութեամբ դրսևորումից, Մայր Աթոռ Սիւրբազմութիւնը եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը յայտարարում են քառասնօրեայ սուգ:

Աղօթք, խումկ եւ բիւր օրհնութիւն Վեհափառ Հայրապետի անմեռ յիշատակին: Թող Բարին Աստուած Իր Փառաց Պսակին արժանացնի եւ երկնային երանաւտ

խաղաղութեամբ մէջ ընդունի սիրեցեալ Հայրապետի լոյս հոգին՝ ընդ դասս աստուածագգեաց Հայոց երանեալ հայրապետաց:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

ԳԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՍ
ՍՈՒՐԱ ԷԶՄԻԱՄՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԻՒՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը (աւագանի անուամբ Նշան Սարգսեան) ծնունդ է 1932 թ. Օգոստոս 27ին Քեսապում (Սիրիա): Նախնական կրթութիւնը ստացել է հայրենի գիւղի Ուսումնասիրաց միացեալ վարժարանում, որից յետոյ ուսումնառութիւնը շարունակել է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքում (1946թ.): Այստեղ էլ, 1949թ. Մայիսի 29ին ձեռնադրուել է սարկաւագ: 1952թ. աւարտել է ուսումնառութիւնը Դպրեվանքի Ընծայարանի բաժնում:

1952թ. Սեպտեմբերի 28ին, ձեռնադրուելով կուսակոմ քահանայ, ի յիշատակ մորոգ վախճանեալ Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսի (Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն), վերակոչւում է Գարեգին արեղայ եղաւնում Կիլիկիոյ Միաբանութեամբ ուխտի անդամ: Պաշտպանելով վարդապետական աւարտաճառը՝ «Հայաստանեայց եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ Հայ Տարականնորում» քեմայով, 1955թ. Յունիսի 5ին ստանում է վարդապետական աստիճան: Նոյն թուականին պաշտօնավարում է Դպրեվանքում որպէս ուսուցիչ եւ վերակացու: Որոշ ժամանակ անց (1956թ.)

ստանձնում է Դպրեվանքի տեսուչի պաշտօնը:

1957-1959թթ. Գարեգին վարդապետն ուսումնառութիւնը շարունակում է Օսֆորդի համալսարանում, որտեղ հետեւում է աստուածաբանական բարձրագոյն ուսման եւ ստանում է գրականութեան բակալօրիաի աստիճան՝ որպէս աւարտաճառ մերկայացնելով «Քաղկեդոնի ժողովը եւ Հայ եկեղեցին» խորագիրը կրող աշխատասիրութիւնը (1965թ. հրատարակուել է Լոնդոնի S.P.C.K. հրատարակչատան կողմից, վերահրատարակուել է Նիւ Եորքում, 1976թ.):

1960թ. Օսֆորդը աւարտելուց վարդապետը գործում մասնակցութիւն է ունենում միջեկեղեցական մի շարք համագումարների ու ժողովների՝ որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մերկայացուցիչ: Խորէն Ա. Կաթողիկոսի ընտրութիւնից յետոյ (1963թ. Մայիսի 5) Գարեգին վարդապետը կարեւոր դեր է կատարում մորընտիր կաթողիկոսի պաշտօնական այցելութիւններին կազմակերպման գործում: Միաժամանակ մասնակցում է ԵՃԽ միջեկեղեցական կարեւոր համաժողովների:

Դիտորդի կարգավիճակով

մասնակցում է Վատիկանի երկրորդ ժողովի երեք յաջորդական միսսերին (1963-1965թթ.) և Անկլիկան եկեղեցու Լամբեթի համաժողովին (1968թ.): Նշանակալից է նրա դերը Ադիս Աբեբայում արևելյան ուղղափառ դաւանակից ժողովների հոգեւոր առաջնորդների համագումարի կազմակերպման գործում:

Այս շրջանում աստուածաբանութեան, գրականութեան, պատմութեան և մշակույթի թեմաներով դասախօսել է ՀԲԸՄ Դարուհի Յակոբեան Երկրորդական վարժարանում, Պէյրուքի «Համագայիմի» Նշան Փալանջեան ճեմարանում, Beirut College for Women-ում (ներկայումս՝ Beirut University College) և Պէյրուքի Ամերիկեան համալսարանում (A.U.B.), դասախօսութիւններով հանդէս է եկել մի շարք եկեղեցիներում:

1968թ. Յունիսի 16ին, ի գնահատութիւն մուրիսալ ծառայութեան, Խորէն Ա. Կաթողիկոսի օրհնութեամբ նրան շնորհւում է Մայրագոյն վարդապետի աստիճան:

1964թ. Յունուարի 19ին ձեռնադրուել է եպիսկոպոս, 1973թ. Ապրիլի 26ին արժանացել է արքեպիսկոպոսի տիտղոսի:

1971-1973թթ. Գարեգին Եպիսկոպոսը հոգեւոր պատասխանատու ծառայութեան է անցնում Իրանում (Նոր Զուլա):

1978-1977թ. Գարեգին արքեպիսկոպոսը հոգեւոր ծառայութեան է մեկնում ԱՄՆ (Նիւ Եորկ):

1978-1977թթ. Լիբանանում բռնկուած քաղաքացիական պատերազմի տարիներին վնասներ է կրել և ռաւանագործութեան օժանդակութեան կենսական գործում:

1977թ. Մայիսի 22ին, Խորէն Ա. Կաթողիկոսի Հայրապետութեան շրջանում ընտրուում է Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակից Կաթողիկոս: 1983ին, Խորէն Ա.

Կաթողիկոսի վախճանելուց յետոյ հռչակուած է Իբրեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոս:

Անթիպատի Աթոռում 18 տարիների գահակալութեան ընթացքում Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսը զարկ է տալիս ազգային-կրօնական մշակութային և շինարարական աշխատանքներին: Գարեգին Բ. Կաթողիկոսը հաստատում է բրիտանական դաստիարակութեան քաժանմունքը: Նրա յատուկ ուշադրութեան առարկան է դառնում Դարեկամբը (1977թ. Անթիպատից այն փոխադրում է Բիկֆայա), որն ընդարձակուելով ու արդիականացնելով՝ մայաստում է աստուածաբանական ուսուցման բարելաւմը: Գարեգին Բ. Կաթողիկոսը առանձնապէս տուրք ուշադրութիւն է դարձնում հրաշարակչական գործին, հիմք է դրում թանգարան-մատենադարանի շէնքի շինութեանը:

Կաթողիկոսութեան շրջանում ձեռնարկում է հովուապետական այցելութիւններ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմեր: Միջեկեղեցական շրջանակներում այցելութիւններ է տալիս Յովհաննէս-Պօղոս Բ. Պապին (Վատիկան), Անկլիկան եկեղեցու պետ Քենթրբերիի արքեպիսկոպոս Դր. Ռոբերտ Ռանսֆիլդ (Լոնտոն), Շվեյցարիայի Աւստրալանական եկեղեցիների միութեանը, Դանիայի և Գերմանիայի Լութերական եկեղեցիներին, Աւստրալիայի եկեղեցիների խորհրդին և Ղպտի եկեղեցու պետ Նորին Արքեպիսկոպոս Գ. Պատրիարքին (Եգիպտոս):

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տարիներին քաղաքիւ անգամներ այցելել է Մայր Աթոռ Սրբ. Էջմիածին՝ թէ խորհրդային և թէ նորանկախ շրջանում: 1988թ. Դեկտեմբերի 7ի երկրաշարժից յետոյ Գարեգին Բ. Կաթողիկոսը կանգնեց երջանկայիշատակ վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմի՝ բերելով իր

եղբայրական սերն ու զօրակցութիւնը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է:

Վազգէն Ա. Կաթողիկոսի վախճանութից յետոյ, 1995թ. Ապրիլի 4ին Ազգային-եկեղեցական սրբազուսմար ժողովը Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսին ընտրում է Մայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս (գահակալութեան հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ապրիլի 9ին՝ Մաղկազարդի տօնին Մայր Տաճարում):

Ընտրութիւնից ի վեր Նորին Սրբութիւնն իր ողջ եռանդը եւ ջանքերն ուղղեց եկեղեցական կեանքի ներքին կարգաւորմանն ու կազմակերպմանը, մասնաւորապէս Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեռնարանի գործունէութեան վերաշխուսթացմանը, Բրիտանիական Դաստիարակութեան եւ Քարոզչութեան Կենտրոնի զօրացմանն ու քարգաւաճմանը, Բրիտանիական Դաստիարակութեան համալսարանի ծրագրերի մշակմանը, եկեղեցիների ու վանքերի վերանորոգմանը, սոցիալական բնոյթի կառոյցների ստեղծմանը, աստուածաբանական, հոգեւոր եւ հայագիտական հրատարակութիւնների աւելացմանը:

Եկեղեցու աշխատամբը առաւել մպատակաւորուած դարձնելու եւ ժողովրդի կեանքում Բրիտանիական աւանդոյթները ամրացնելու միտման խնդրութեամբ Վեհափառ Հայրապետը վերատեսութեան ենթարկեց Հայաստանի թեմական կառուցուածքը. 1996թ. Հայաստանեան մարտի 4 թեմերի կողմէն ստեղծուեց եւս 4 նոր թեմ: Ստեղծուեցին նաեւ Ուկրաինայի եւ Հարաւային Ռուսաստանի թեմերը:

Վերաշխուսթացաւ Հոգեւոր ձեռնարանի կեանքը: 1997թ. Սեպտեմբերին, 80ամեայ ընդմիջումից յետոյ վերաբացուեց Գեորգեան Հոգեւոր ձեռնարանի հիմնովին նորոգուած շէնքը: Հիմք դրուեց նաեւ

ուսանողների համար նոր կացարանային համալիրի շինարարութեանը: Այս շրջանում քաղաքատիրոջ նաեւ նեմարանի սաների թիւը՝ հասնելով շուրջ 120-ի:

Վեհափառ Հայրապետի հովանաւորութեամբ կեանքի կոչուեց երջանկայիշատակ Վազգէն Ա. Կաթողիկոսի ծրագիրը. Օշականում՝ Սր. Մեսրոպ Մաշտոցի նուիրական շիրիմի կողքին՝ վերակառուցուած շէնքում հաստատուեց Սր. Մեսրոպ Մաշտոցի անուան Դպրատունը, որն այսօր դարձել է գիտական եւ մշակութային կարեւոր կենտրոն:

Գահակալութեան համեմատաբար կարճ ժամանակահատուածում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսը հովուապետական այցելութիւններ տուեց Հայ Առաքելական եկեղեցու Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի (1995թ.), Վրաստանի (1995թ.), Ուկրաինայի, Ռումանիայի (1995թ.), Գանատայի (1995թ.), Ամերիկայի Միացեալ Նահանգների (1996թ.), Ֆրանսայի (1997թ.), Սինգապուրի, Թայլանդի, Աւստրալիայի (1997թ.), Աւստրիայի (1997թ.), Անգլիայի (1997թ.), Եգիպտոսի (1998թ.) Գերմանիայի (1998թ.), թեմերին եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանին: Մեծ ուրախութեամբ եւ հայրական սիրով Վեհափառ Հայրապետը մախագահեց Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի նորընտիր Կաթողիկոս Արամ Առաջինի ձեռնադրութեան ու օծման արարողութեանը 1995թ. Յուլիսի 1ին:

Վեհափառ Հայրապետը նոր թափ հաղորդեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Էկումենիկ գործունէութեանը եւ ծառայութեանը: Գահակալութեան տարիներին Վեհափառ Հայրապետը պաշտօնական այցելութիւններ է տուել Մոսկուայի եւ համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբութիւն Ալեքսի երկրորդին (1995թ.), Ռումանիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբութիւն Թեոկտիստին (1995թ.), Վրաց Ուղղափառ Եկեղեցու

Կաթողիկոս-պատրիարք Նորին Սրբութիւն Իլյա Երկրորդին (1995թ.), Հռոմի Սրբազան Քահանայապետ եւ Կաթոլիկ եկեղեցու պետ Նորին Սրբութիւն Յովհաննէս-Պօղոս Երկրորդ պապին (1996թ.), Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Սրբութիւն Բարթողղիմէոս Առաջինին (1996թ.), Քիմքրքերիի արքեպիսկոպոս Դր. Ջորջ Քերիին (1997թ.), Ղպտի Ուղղափառ եկեղեցու պատրիարք Նորին Սրբութիւն Շնուղա Երկրորդին (1998թ.): Այցելել է նաեւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոն ժնեւում:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունել եւ հիւրընկալել է մի շարք եկեղեցական ու էկումենիկ պատուիրակութիւնների, մասնաւորապէս Նորին Սրբութիւն Բարդուղիմէոս Ա. Տիեզերական Պատրիարքին, Նորի Սրբութիւն Ալեքսի Բ. Պատրիարքին, Նորին Սրբութիւն Թեոկտիստ Պատրիարքին, Նորին Սրբութիւն Իլյա Բ. Կաթողիկոս-Պատրիարքին եւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխաւոր քարտուղար Դր. Կոնրադ Ռայգերին: Վեհափառ Հայրապետին այցելել են նաեւ պետական քաղաքիւ քարձրաստիճան այրեր, մշամաւոր քաղաքական գործիչներ, գիտութեան եւ մշակոյթի ականաւոր դէմեր:

Վեհափառ Հայրապետը հեղինակ է աստուածաբանական, հայագիտական, փիլիսոփայական, քարոյագիտական եւ գրական քաղում ուսումնասիրութիւնների եւ յօդումների, ինչպէս նաեւ Հայերէն, Անգերէն, Ֆրանսերէն եւ այլ լեզուներով երկու տասնեակից աւելի գրերի: Նորին Սրբութիւնը ՀՀ Գիտութիւնների Ազգային ակադեմիայի պատուաւոր անդամ է: Վեհափառ Հայրապետը, որպէս խոշոր մտաւորական արժանացել է աշխարհի մի շարք կրօնական եւ գիտական հաստատութիւնների եւ համալսարանների պատուաւոր դոկտորի կոչմանը:

1998թ. Ապրիլին Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Միացեալ Նահանգներ՝ Ամերիկայի հայոց թեմի 100-ամեայ յոբելինական հանդիսութիւններին մախագահելու մատակարար: Այցելութեան ընթացում Վեհափառ Հայրապետը հեթարկուեց նաեւ թշկական ժնութեան, որին հետեւեց տեւական բուժման շրջանը:

1998թ. Հոկտեմբեր եւ 1999թ. Փետրուար ամիսներին Վեհափառ Հայրապետը երկու ծանր վիրահատութիւններ կրեց:

1999թ. Մարտին, Մայր Աթոռ վերադարձից առաջ, Վեհափառ Հայրապետը Վատիկանում Հռոմի Պապի հետ մեկտեղ կատարեց «Հռոմ-Հայաստան» ցուցահանդէսի քացումը՝ մուիրում լայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700-ամեակին: Վեհափառ Հայրապետի Վատիկան կատարած այցի ընթացում Յովհաննէս-Պօղոս Բ. Պապը ընդունեց Հայոց Հայրապետի հրաւերը՝ Յուլիսի 2-4ը այցելել Մայր Աթոռ Սբ. Էջմիածին: Վեհափառ Հայրապետի առողջական վիճակի վատթարացման հետեւանումով մախատեսուած այցելութիւնը չկայացաւ:

1999թ. Յունիսի 29ին ժամը 17:50ին Ամենայն Հայոց Հայրապետը երկարատեւ եւ ծանր հիւանդութիւնից յետոյ ի Տէր հանգեաւ:

Նորին Սրբութիւն Գարեգին Ա. Կաթողիկոսի գործունէութեան հիմնական ուղղութիւնը եղաւ եկեղեցական կեանքի վերամորոգումը եւ վերաշխուժացումը: Վեհափառ Հայրապետը Հայ Առաքելական եկեղեցու պաշտօնական հիմնադրման 1700ամեակը համարելով որպէս մի նոր Հոգեգալուստ հայ ժողովրդի կեանքում, այն դիտում էր իրրեւ Հայ եկեղեցու քրիստոնէական աւանդութի վերամորոգման եղակի հմարաւորութիւն՝ յատկապէս մորանկախ ու ազատ Հայաստանի Հանրապետութիւնում:

ԴԻԻԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՄ Ա. ԷՋՄԻԱՇԻՆ